ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԳԿՊ-ԳՀԱՊՁԲ-22/1»-1

ք. Վանաձոր «28» դեկտեմբերի 2021թ.

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Մ. Ա. Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Ալֆա-Ֆարմ >> ՓԲԸ-ն , ի դեմս տնօրեն Մ. Մացակյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և/ կամ արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը: Պայմանագիրը կատարել սույն պայմանագրի հավելված N 1.1 ով հաստատված աշխատակիցների և հայաստանյան ծագում ունեցող ապրանքների մատակարարման միջոցով :

2.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի

արտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4 094 722.80 (չորս միլիոն իննսունչորս հազար յոթ հարյուր քսաներկու ՀՀ դրամ 80 լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև _____ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:[19]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

3.4 Սույն պայմանագրի 2.4.11 և 2.4.12 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով վաճառողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված _____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[19] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.	Իրավ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
ՀՎՀՀ 07300626	Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ Վանաձորի մ/Ճ	Այ Դի Բանկ
հ/հ 247170009424	հ/հ 11815019068400
	ՀՎՀՀ 05507136
	Հեռ. 060 700 500
Տնօրեն ---------- Հ.Ս. Սիմոնյան	էլ. հասցե՝ tender@alfapharm.am
/ստորագրություն/	----------
Կ.Տ.	/ստորագրություն/
	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված
«28» դեկտեմբերի 2021թ. կնքված
«ՎԳԿՊ-ԳՀԱՊՁԲ-22/1»-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	33671114	Ամինոֆիլին 150 մգ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Դեղահատ 150մգ, <<վախենում է խոնավությունից>>	հատ	4,8	1920	400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.- ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	400	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
3	33621740	Ամլոդիպին 5 մգ	Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	19.83	238000	12000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.- ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	12000	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
4	33621740	Ամլոդիպին 10 մգ	Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 10մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	31,73	63466,67	2000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.- ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատո	2000	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*

									ւն		
5	33621420	Ատորվաստատին 20 մգ	Բելմեդպր եպարատի ՀՈՒՁ	Դեղահատ 20մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	14,55	145500	10000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	10000	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
7	33661121	Ացետիլսալիցիլաթթու 150 մգ	Տակեդա ԳմբՀ	Դեղահատ աղելույծ 150մգ ապակե շշիկում <<վախենում է խոնավությունից>>	հատ	9,52	152320	16000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	16000	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
8	33631180	Արծաթի սուլֆադիազին նրբաքսուք 1% 50գ	Գրինդեկս ԲԸ	Ալյումինե պարկուճ 1% 50գ <<վախենում է ջերմությունից>>	հատ	3184	19104	6	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	6	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
9	33691140	Ացետիլցիստեին 100 մգ	Սալուտաս Ֆարմա ԳմբՀ	Դեղահատ 100մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	95,45	19090	200	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	200	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
10	33691140	Ացետիլցիստեին 600 մգ	Զամբոն Սուիտզերլանդ ՍՊԸ	Դեղահատ 600մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	130,7	52280	400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղ	400	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի

									ով հեռավորության վրա դեղատուն		ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
12	33651112	Ամոքսիցիլին + քլավուլանաթթու դ/կախույթ 125մգ/5մլ+31,25մգ/5մլ 22հկում	Լեկ դ.դ, Պերզոնալի	Դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 125մգ/5մլ+31,25մգ/5մլ, <<կոտրվող է>>	հատ	2141	214100	100	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	100	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
13	33651112	Ամօքսիցիլին+քլավուլանաթթու 250մգ/5մլ+ 62,5մգ/5մլ մգ 22հկում	Լեկ դ.դ, Պերզոնալի	Դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 250մգ/5մլ+ 62,5մգ/5մլ <<կոտրվող է>>	հատ	2565	205200	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
15	33651125	Ազիթրոմիցին 500մգ դեղապատիճ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Ազիթրոմիցին դեղապատիճ 500մգ	հատ	482,33	48233,33	100	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	100	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
17	33691121	Ալբենդազոլ 400 մգ դ/հ	Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 400մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	188,5	15080	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
19	33621720	Բիսոպրոլոլ 5 մգ + Ամլոդիպին 5մգ դ/հաբ	Էգիս Ֆարմասյո	Դեղահատ <<վախենում է	հատ	142,23	85340	600	Ք. Վանաձոր,	600	2022թ. ֆինանսական միջոցներ

		300մգ	ւտիկալս ՓԲԸ	խոնավությունից> >					Բաթում ի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն		նախատես դեպքում կողմ միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
21	33661153	Դեքսամեթազոն 0.5մգ	ԿՌԿԱ դ.դ.	Դեղահաբ 0,5 մգ <<վախենում է խոնավությունից> >	հատ	31,7	12680	400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	400	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
22	33661153	Դեքսամետազոն ակնակաթիլ 0,1 %	Վարշավայի դեղագործական գործարան «Պոլֆա» Ս.Ա.	ակնակաթիլ 1մգ/մլ, 5մլ պլաստիկե սրվակ ‹‹վախենում է	հատ	780	3900	5	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	5	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
23	33621380	Դիգոքսին 0.25 մգ	Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ	Դեղահաբ 0,25 մգ <<վախենում է խոնավությունից> >	հատ	5,74	28700	5000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	5000	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
24	33631310	Դիկլոֆենակ 25 մգ/ մլ 3մլ ամպուլա	Հեմոֆարմ Ա.Դ	Լուծույթ ներարկման 25 մգ/ մլ 3մլ <<կոտրվող է>>	հատ	77,2	21616	280	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատո	280	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

									ւն		
25	33631310	Դիկլոֆենակ 5% 50 գ	ալուտաս Ֆարմա ԳմբՀ,	Ալյումինե պարկուճ 5% 50գ <<վախենում է ջերմությունից>>	հատ	1703	510900	300	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	300	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
26	33631310	Դիկլոֆենակ թ/պ 50 մգ	Հեմոֆարմ Ա.Դ	դեղահաբ 50մգ/գ, <<վախենում է ջերմությունից>>	հատ	16,35	26160	1600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1600	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
30	33621210	Երկաթ պարունակող համակցություն 100 մգ	Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ.	Դեղահատեր ծամելու 100մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	83,07	24920	300	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	300	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
35	33661156	Թիմոլոլ 0,5 % 5մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ.	Ակնակաթիլ 0,5 % 5մլ, պլաստիկե սրվակ <<վախենում է ջերմությունից>>	հատ	460	27600	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	60	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
39	33621767	Իզոսորբիտի մոնոնիտրատ 60մգ	Դեքսել-Ֆարմա ՍՊԸ	Դեղահատ 60մգ <<վախենում է խոնավությունից>	հատ	153,46	55247,14	360	Ք. Վանաձոր, Բաթում	360	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու*

				>					ի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն		դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
40	33642230	Լևոթիրոքսին 100մկգ	Մերկ ԿԳԱԱ	Դեղահատ 100մկգ ‹‹վախենում է խոնավությունից››	հատ	11,38	15932	1400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1400	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
43	33611200	Լոպերամիդ 2մգ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Դեղահատ 2մգ<<վախենում է խոնավությունից>>	հատ	8,15	12225	1500	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1500	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
44	33671131	Լորատադին 10 մգ	Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 10մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	25,1	40160	1600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1600	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
46	33691231	Կալցիում+խոլեկալցիֆերոլ ծամելու 500մգ+10մկգ	Տակեդա ԱՍ	Դեղահատ 500մգ+10մկգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	43,525	174100	4000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	4000	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

47	33691231	Կալցիում+խոլեկալցիֆերոլ դյուրալույծ 1000մգ+22մկգ	Դենկ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ	Դեղահատ դյուրալույծ 1000մգ+22մկգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	245,4	98160	400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	400	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
48	33621510	Կապտոպրիլ 25 մգ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Դեղահատ 25մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	3,95	19750	5000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	5000	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
50	33631300	Կետոպրոֆեն 50 մգ դ/պատիճ	Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ.	Դեղահատ 50մգ ‹‹վախենում է խոնավությունից››	հատ	35,56	106680	3000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3000	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
51	33631300	Կետոպրոֆեն ներարկման 50մգ/մլ	Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ.	Լուծույթ ներարկման 50մգ/մլ <<կոտրվող է>>	հատ	190,4	9520	50	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	50	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
53	33642220	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ	Պֆայզեր Իտալիա Ս.ռ.Լ.	Դեղահատ 4մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	54,73	87573,33	1600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավո	1600	*2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու*

									ության վրա դեղատուն		օրվանից սկ
54	33621700	Մետոպրոլոլ 25 մգ	Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	Դեղահատ 25մգ <<վախենում է խոնավությունից> >	հատ	13,45	48420	3600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3600	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
55	33611220	Ներքին ընդունման ջրավերականգնիչ աղեր 18.9 գ փաթեթ	Օրիոն Քորպորեյշն, Օրիոնինտի 1	դեղափոշի դեղաչափված փաթեթիկներ	հատ	174	13920	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
56	33611150	Պանկրեատին (լիպազ3500ԱՄ+ամիլազ 4200ԱՄ+ պրոտեազ 250ԱՄ) դ/հատեր թաղանթապատ	Բեռլին-Քեմի ԱԳ	Դեղահատ <<վախենում է խոնավությունից> >	հատ	27,45	219600	8000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	8000	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
57	33661122	Պարացետամոլ 120մգ /5մլ	Արփիմեդ ՍՊԸ	Լուծույթ ներքին ընդունման 120մգ/5մլ ապակե կամ պլաստիկե 22հկ և չափիչ բաժակ <<կոտրվող է>>	հատ	317	25360	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
59	33691186	Պիրացետամ 800 մգ	Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	Դեղահատ 800մգ <<վախենում է խոնավությունից>	հատ	55,1	661200	12000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-	12000	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի

				>					ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն		միջև կնքվ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
60	33642210	Պրեդնիզոլոն 5մգ դ/հ	Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ, 220007 ՄԻՆՍԿ	Դեղահատ 5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	7,38	738	100	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.- ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	100	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
63	33691133	Ջուր ներարկման 2մլ	Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ	Լուծույթ ներարկման 2մլ ամպուլներ <<կոտրվող է>>	հատ	19,2	1152	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.- ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	60	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
64	33621560	Ռամիպրիլ+հիդրոքլորթիազիդ 2,5մգ+12,5մգ դ/հաբ	ԿՌԿԱ դ.դ.	Դեղահատ 2,5մգ+12,5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	77,5	23250	300	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.- ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	300	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
66	33651131	Սուլֆամեթոքսազոլ+տրիմեթոպրիմ 480 մգ	Ադամեդ Ֆարմա Ս.Ա	Դեղահատ 480մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	35,25	14100	400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.- ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	400	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

69	33621620	Սպիրոնոլակտոն 50 մգ	Գեղեոն Ռիխտեր ԲԲԸ	Դեղահատեր թաղանթապատ 50մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	66,1	39660	600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	600	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
71	33631380	Տոլպերիզոնի հիդրոքլորիդ 150մգ	Գեղեոն Ռիխտեր ԲԲԸ	Դեղահատ 150մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	104	187200	1800	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1800	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
72	33631491	Ցետիրիզին 10մգ դ/հաբ	Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	Դեղահատ 10մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	80,27	24080	300	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	300	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
73	33651118	Ցեֆտրիաքսոն 1գ	"Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ,	Դեղափոշի ներարկման լուծույթի 1գ սրվակ <<կոտրվող է>>	հատ	173	10380	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	60	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
75	33671116	Քսիլոմետազոլին քթակաթիլ 0,5մգ/մլ	Վարշավայի դեղագործական գործարան «Պոլֆա» Ս.Ա.	Քթակաթիլ 0,5մգ/մլ, 10մլ պլաստիկե 22հկ <<վախենում է ջերմությունից>>	հատ	324	25920	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավո	80	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու

									ության վրա դեղատուն		օրվանից սկսած
76	33611100	Օմեպրազոլ 20 մգ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Դեղահատ 20մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	12,17	243333,33	20000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	20000	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
77	33651150	Ֆլյուկոնազոլ 150 մգ	Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 150մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	163,3	6452	40	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	40	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
78	33621590	Ֆուրոսմիդ 40 մգ	Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 40մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	3,63	14500	4000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	4000	2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

***ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Համաձայն ՀՀ Կառավարության 2013 թվ.-ի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 7-րդ կետի՝ դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը, գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:**

Բոլոր հղումների դեպքում հասկանալ <<կամ համարժեք >> արտահայտությունը:

. Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման սահմանվում է սպասարկման տարածքում գործող՝ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատների գտնվելու պահանջը, իսկ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատան բացակայության հիմքով գնման

ընթացակարգը չկայանալու դեպքում հայտարարվում է նոր գնման ընթացակարգ՝ սահմանելով սպասարկման տարածքում գործող՝ մինչև 15 կմ շառավղի հեռավորության վրա դեղատների գտնվելու պահանջը:

Գնման ընթացակարգի արդյունքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որակավորումը հիմնավորող փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող դեղատան մասին տեղեկատվություն (անվանումը, գտնվելու հասցեն, եթե առաջարկվող դեղատունը չի հանդիսանում հաղթող ճանաչված մասնակցի դեղատան մասնաճյուղ, ապա ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիր): Տեղեկատվության հիման վրա գնահատվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը: ԱԱՊ և հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքված պայմանագրում նշվում է դեղատան վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

*** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում: Եթե իրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը::Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

****** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ
Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.
ՀՎՀՀ 07300626
Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
Վանաձորի մ/ճ
h/h 247170009424
Տնօրեն՝ ____________ Մ. Ա. Սիմոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 1/68
Այ Դի Բանկ
Հ/Հ 11815019068400
ՀՎՀՀ 05507136
Հեռ. 060 700-500
Էլ. հասցե՝ tender@alfapharm.am
____
/ստորագրություն/
Կ.Տ